Եպիսկոպոսութեան առ ժամանակ մի լռեցուցեալ, որպէս եւ յայդր, զի զինչ պատիւ Եպիսկոպոսին։ Եւ յետ այլոց բանից ասէ, եթէ Տէր կամեսցի գտեալ զմիմեանս արտաքոյ Երուսաղէմիդ համբուրեսցուք եւ ցաւակցեսցուք, ոչ եթէ իշխանութեան և փառաց ցանկանալով ձեռն արկի յայս պաշտօն, այլ միայն գիտասցի թէ 'ի մէջ այլոց ազգաց կարեմք Աստուծով երեւիլ և անուանիլ, եւս եւ ազատ մնալ 'ի Ռոֆոլէ ազգին և 'ի նենգապատիր խարդախանաց սուտ եղբարց։ Յետ և այլ բազում գանկատանաց դարձեալ խնդրէ զ10,000 դահեկանն, որ 'ի պատասխանի գրեն Խորհրդականք, առաքել նախ զմուրհակն եւ ապա առնուլ զդրամն. թէպէտ նա զայրացաւ առ այս, զի ընդդէմ էր օրինաց, բայց առաքեաց զայն 'ի Յոպպէ առ Թարգմանն Անգղիոյ առնուլ զդրամն 'ի Տեսչէ տեղւոյն և տալ զմուրհակն։ Եւ զի ինքն յորդորմամբ ոմանց եդեալ էր 'ի մտի հրաժարիլ 'ի պաշտօնէ իւրմէ և մեկնիլ անտի, առաւել վստահացեալ 'ի դիրս նոցա՝ գնաց 'ի Պերութ եւ ձեռնտուութեամբ բարեկամաց իւրոց յաջողեցաւ թողուլ զպաշտօնն զայն։ Ահա ընկալաւ դիր յԵրուսաղէմ հակառակ առաջին գրութեան, խոստանային հատուցանել նմա ամ յամէ 1500 դահեկան շահ դրամոց նորին, եւ հրաւիրէին զինքն գալ մնալ յԵրուսաղէմ. և Յակոբ եպիսկոպոս յառաջագոյն գրեալ էր առ Խորհրդականս հատուցանել զգումարն յազատութիւն երկուց կողմանց, զի դադարեսցին բանք և գրութիւնք, եւ խոստացեալ էր պահել առ իւր զԻոնէսիոս շահիւ նոյն դրամոյ, այլ 'ի Հ'յաջողիլ գործոյն արար Դիոնէսիոս պատասխանի. տեսեալ թէ այլ և այլ պատճառանօք երկարեն զժամանակ, միթէ ես մի՞ն էի թշնամի Գաբրիէլ Պատրիարքին, միթէ ի՞նձ ընդդիմացաւ, այլ որ արարն տացէ զպատասխանին, չնորհակալեմ զհրաւիրմանէ ձերմէ զմեզ, բայց գիտէք, թէ ոչ կարեմ գալ և մնալ յԵրուսաղէմ որով կերպիւ և իցէ, միթէ հնա՞ր իցէ մարդոյ յանձուկ յորովայն մօր իւրոյ մտանել եւ մեռանիլ, չէ այդ մահ վասն Աստուծոյ արքայութեան և հաւատոյ, այլ յիմարաբար կրել զվիշտս 'ի պարտատերից, բռնապահանջ յանողորմից, և յազգէն, և յազգաց և 'ի սուտ եղբարց, որոց կատարածն յուսահատու-